*Աշոտ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ*

# *ՆՈՐ ՎԻՄԱԳՐԵՐ ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԻՑ*[*]

Միջնադարյան Հայաստանի նշանավոր հոգևոր կենտրոն Հովհաննավանքը, որի թեմական իրավասությունը XIV դ. սկզբին բացի Նիգ, Ամբերդ, Արագածոտն գավառներից տարածվել է նաև Շիրակի վրա, ըստ սրբազան ավանդության, հիմնել է Սբ Գրիգոր Լուսավորիչը, ով բերել ու այդտեղ է ամփոփել Հովհաննես Մկրտչի մասունքները՝ կառուցելով Սբ Կարապետ միանավ բազիլիկ եկեղեցին: Տեղանքի ընտրությունը Սբ Հովհաննես Մկրտչի անունով սրբարանի կառուցման համար պատահական չէր, քանի որ այդ կողմերում, ըստ մեր դիտարկումների, նախաքրիստոնեական շրջանում տարածված է եղել ջրի պաշտամունքը, և հարկ էր կենարար այդ տարրի հետ կապված ժողովրդական անմարելի զգացմունքներն ուղղորդել դեպի նորահաստատ եկեղեցի՝ տալով դրանց քրիստոնեական երանգավորում: Հետաքրքրական է, որ այսօր էլ Պայծառակերպության տաղավար տոնը հանդիսանում է Հովհաննավանքի ուխտի օրը, երբ մեծ թվով ուխտավորներ են հավաքվում Վարդավառին:

Հնում Հովհաննավանքը հռչակված է եղել միաբանների խստակենցաղ վարքով, որտեղ ժուժկալությունն ու սակավապետությունը վանականների կրոնական ինքնանվիրման ամենօրյա ուղեկիցն են եղել, ինչի պատճառով էլ այն կոչվել է նաև Սովի կամ Սուտի վանք, այլ ոչ ումն Սյուղիանոս վանահոր, կամ տեղանքի անունով, ինչպես ընդունված է կարծել:

Վանական համալիրը բազմակողմանիորեն ուսումնասիրել ու քննության է ենթարկել ականավոր հնագետ Կարո Ղաֆադարյանը, որի տքնաջան աշխատանքի արգասիքը հանդիսացավ «Հովհաննավանքը և նրա արձանագրությունները» երկասիրությունը (Երևան, 1948):

Հեղինակը ոչ միայն չափագրել, ճարտարապետական, հնագիտական, պատմագիտական վերլուծությունների է ենթարկել հուշարձանախումբը, այլև ամենայն բարեխղճությամբ ու առավել ճշգրտությամբ ընդօրինակել, հանրությանն է ներկայացրել Հովհաննավանքի ու շրջակայքի արձանագրությունները:

Դրանք առաջինը հավաքել է XVII դ. պատմագիր և այդ վանքի միաբան Զաքարիա Սարկավագ Քանաքեռցին, որից էլ օգտվել են Հովհ. եպս. Շահխաթունյանցը, Ղ. Ալիշանը, Կ. Կոստանյանցը: Բայց ընդօրինակված արձանագրությունների քանակն ու վերծանության որակը բավարար չեն եղել Հովհաննավանքի ամբողջ վիմագրական ժառանգությունն ընդգրկելու ու արտացոլելու առումներով, չնայած դրանցից մի քանիսի դերն անփոխարինելի է, քանի որ որոշ վիմագրեր բնական և այլ արհավիրքներից անդառնալիորեն անհետացել են, և հետևապես, Զաքարիա

---

[*] *Հոդվածն իբրեւ զեկուցում ներկայացվել է Գյումրիում 2013թ. հոկտեմբերի 4-6-ը կայացած «Պատմամշակութային ժառանգություն եւ արդիականություն» միջազգային գիտաժողովում:*

Սարկավագի վերծանությունները ձեռք են բերել բնագրային արժեքի նշանակություն:

Հովհաննավանքի արձանագրությունների ամբողջական հավաքման հարցը լուծեց Կ. Ղաֆադարյանը: Հնագետը Հովհաննավանքից և մերձակայքից հավաքեց ու հրատարակեց ընդհանուր առմամբ 80 արձանագրություն:

Մեր կողմից ընդօրինակված նորահայտ վիմագրերը, ավելի քան 1,5 տասնյակ[1], այն արձանագրություններն են, որոնք Կ. Ղաֆադարյանի գործունեության ընթացքում ծածկված են եղել ծեփի շերտով, գտնվել են հողի տակ, նաև հազիվ նշմարելի և այլ վայրերից բերված հիշատակագրություններ են:

Դրանք, համալրելով ու հարստացնելով Հովհաննավանքի վիթխարի վիմագրական ժառանգությունը, կարևորագույն սկզբնաղբյուրներ են ոչ միայն այդ հոչակավոր մենաստանի, այլև հայոց միջնադարյան պատմության ուսումնասիրության համար:

1. Հովհաննավանքի համալիրի հնագույն, IV դ. բազիլիկ եկեղեցում արձանագրություններ չեն պահպանվել: Բայց 2010 թ. ամռանը, երբ ՀԱԻ վիմագրագիտական արշավախումբը (Ա. Մանուչարյան, Ս. Ադամյան, Ա.Գափոյան, Տ. Իսահակյան) աշխատում էր Հովհաննավանքում, վանքի պահակ Արիստակես Խուդավերդյանը (Պայիկ) վաղմիջնադարյան եկեղեցու հարավային պատի կամարի աջ հատվածում ցույց տվեց տառանետքեր, որոնք նշմարվում էին ծեփի տակից: Արշավախմբի անդամների կողմից մաքրվեց սվաղը, և բացվեց հետևյալ արձանագրությունը.



ՇՆՈՐՀԻՒՆ ՔԻ ԵՍ ՈՒՄԵԿՍ Ե⌜Ի/ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ⌝ Մ⌞ԱՄԱ⌟

ՏԻԿԻՆ ՏԻԱՔ ԻՆՉՍ⌜Ի ՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ ԵԻ / ՍՊԱՍԱՒ⌝ ՈՐՔՍ

ՎՃՌԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ Դ(Կ) ԱԻՐ ԺԱՄ ՊԱՏԱ / ՐԱԳԵԼ⌝ Ի

ՏԱԻ⌜ՆԻ ՔԱ⌝ ՌԱՄՆԻՑ: ՈՎ ՉԱՆԷ, Մ⌜ԵՂԱՑՍ Է Ի ՏԷ⌝:

---

[1] *Գրչագիրը՝ գեղանկարիչ Գևորգ Համբարձումյանի:*

Ծանոթ. Նվիրատուներից առաջինը մանազկերտցի նշանավոր մեծահարուստ, վաճառական, միջնադարյան Հայաստանի առևտրական դրամագլխի կարկառուն ներկայացուցիչ Ումեկն է, ով XIII դ. կեսերին Կարինից տեղափոխվել և հաստատվել էր Հյուսիսարևելյան Հայաստանում: Նրա կողակիցը՝ Մամա տիկինը (արձանագրություններում՝ Մամախաթուն, Մամա խաթուն), Ումեկի երկրորդ կինն էր, որ դուստրն էր հռչակավոր Հասան Ջալալ Դոլայի:

IV դ. բազիլիկ եկեղեցուն ընծայատու ամուսինների կատարած նվիրատվությունը, դատելով պատարագաժամերի քանակից՝ 4, եղել է միջին չափի: Արձանագրությունը պետք է թվագրել XIII դ. 50-60-ական թվականներով. Ումեկը վախճանվել է 1266-ին:

2. ԽԱՉՔԱՐ, փոքր, հենած գավթի հյուսիսային պատին, ներքնամասում, 5 տող.



ԱՐՔ ՍՈՔԱ, ՈՐ Ի/ ԱՆԱՒՐԻՆԱՑ / ՄԵՌԱՆ Ի /
ՆԻԳ / ԵՒ ՀԱՍԱՆԱ ՈՂՈՐՄԵՍՑԻ ՔՍ, ՈՐ
Է Ի Ն(400) ԵՒ ՁԲ(82) (+ 551 =) 1033:

Ծանոթ. Հովհաննավանքի ամենահին արձանագրությունն է, որ, անշուշտ, մենաստան բերվել է այլ վայրից: Կարծում ենք՝ 1033 թ. խաչքարը կերտվել է Ատրպատականից Դվինի վրայով մինչև Նիգ գավառ ասպատակած սելջուկների դեմ 1021թ. Սաղմոսավանքից ներքև՝ Քասախ կիրճում, Սերկևիլ կոչված վայրի հաղթական ճակատամարտում նահատակված հայ զինվորների հիշատակին, որոնց թվում էր նաև Հասան անունով մեկը: Այդտեղ զոհվել է նաև հեծելազորի հրամանատար, զորավար Վասակ Հոլում Պահլավունի Բջնեցի իշխանաց իշխանը:

3. ՏԱՊԱՆԱՔԱՐ, գավթի հյուսիսային պատի տակ, 5 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԳԵՐ / ԵԶՄԱՆԻՆ
Կ ⌜ԱՐԲ⌝ Ե / ՑԻ ՕՎԱՍԱԲ
ՎԱՐԴԱ / ՊԵՏԻՆ, ՈՐ
ՎԱՂՋԱ / ՆԵՑԱՒ ՌՃՂԸ (1749)-ԻՆ:

Ծանոթ. Հավանաբար, Կ. Ղաֆադարյանի գործունեության ժամանակ գավթի հատակի այդ հատվածը ծածկված է եղել հողով, ինչը պատճառ է հանդիսացել, որ այս տապանագրությունը չզետեղվի նրա գրքում:

Օվասար վարդապետ Կարբեցին երևի եղել է Հովհաննավանքի նշանավոր առաջնորդներից, այլապես պատիվ չէր ունենա բացառության կարգով թաղվելու գավթում:

4. ԳԱՎԻԹ, հյուսիսային պատին, դեպի տապանատուն մուտքի ձախ կողմում, մեծագիր, անկանոն, սպիտակ ներկով, 3 տող.



ԵՍ ՈՎԱՆԷՍ ԱԲԵՂ⌊Ա⌋ /
Ա̅Ծ̅ ⌊Ծ⌋ԱՌԱՆ:

Ծանոթ. Ուշ միջնադարյան հիշատակագրություն է՝ կատարված Հովհաննավանքի միաբաններից մեկի կողմից:

5. ԽԱՉՔԱՐ, ագուցված գավթի արևելյան պատի հիմնայանը, գորշագույն, վերնամասում, ներքնամասում և պատվանդանին, 4 տող.



Յ̅Ս̅ Ք̅Ս̅, / ԱԴԱՄ, / ԴԱՒԻԹՍ ՑԻ / ՇԵՑԷՔ:

Ծանոթ. Վերևի խաչաթևին պատկերված է Հիսուս Քրիստոսի գլուխը, իսկ ներքևինի տակ՝ Ադամինը: Դա ունի զուտ խորհրդանշական իմաստ. Հիսուս Քրիստոսի խաչելությամբ հաղթահարվեց մարդկության ադամական մեղքը:

Դավիթը այդ բարձրարվեստ խաչքարը կերտող վարպետի անունն է (XIII դ.):

6. ԳԱՎԻԹ, հարավարևելյան սյան արևելյան մասում, խաչաքանդակի կողքերին, 1 տող.



ԱԶԻԶ ՔԱԶԻՆ:

Ծանոթ. Հնարավոր է՝ լինի Ազիզբեկ Ա-ի՝ Ազիզբեկենց տոհմի հիմնադրի, Եղվարդի տիրոջ հիշատակությունը: Նա եղել է Շահանշահ Բ Զաքարյանի (1268-1320) զորավարներից[2]:

7. ԳԱՎԻԹ, հյուսիսարևմտյան այան հյուսիսարևելյան մասում, հավասարաթև խաչքանդակից վերև, եղծված, 3 տող.



ՁԽ⌊Ա⌋Չ⌊Ա⌋ ՔԱՐԷ⌊ԽԱՒՍ⌋ ԵՂԻ / ⌊Ա⌋Յ
Ե/ՐԵՑ ⌊ԻՆ⌋:

Ծանոթ. XVI դ. երկրորդ կեսի արձանագրություն է, քանի որ նույն այան բնի վրա կա 1563 թ. հիշատակություն Եղիա քահանայի կողմից[3]: Բացառված չէ, որ նույն անձը լինի:

8. ԳԱՎԻԹ, նույն հյուսիսարևմտյան այան հյուսիսարևելյան մասում, բարձրուստ, 1 տող.



ԹՎ ⌊ԻՆ⌋ ՋԿԸ (1519):

9. ԳԱՎԻԹ, արևմտյան պատին, արտաքուստ, մուտքի աջ կողմում, հազիվ նշմարելի, անկանոն տառերով, 8 տող.



⌈ՍԲ ՆՇԱՆՍ ԲԱՐ/⌈Է⌉ԽԱՒՍ
ՆԵԹ/ԱՐԵՆՑ / ՄՈՒՇԵՂԱ
⌈Ի⌉ ԹՎ ⌊ԻՆ⌋ ⌈Հ⌉ԱՑ ⌊ՈՑ⌋ ՊԾԳ
(1404) ԻՆ - ԵԻ ՆՄ ... ԵԻ ՈՐԴՈՑ
⌈ՊԱՐ⌉ ՈՆ ԱՐՂՆԱԹՁԻՆ:

Ծանոթ. Թվականի Ծ(50) տասնավորը փորագրված է շրջագիր:

---

[2] Տե՛ս *Յովսէփեան Գ., Ազիզբեկենք և նրանց շինարարական գործը, «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա և Բ, Վաղարշապատ, 1921-1922, էջ 180:*
[3] Տե՛ս *Ղաֆադարյան Կ., Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Եր., 1948, էջ 111:*

10. ԲԵԿՈՐ ԽԱՉՔԱՐԻ, տաճարի արևմտյան բակի պատի վրա, 1 տող.



⌈ՆՇԱՆ ՄԲ Լ ԷՐ.... ԱԻԳՆԱԿԱՆ⌉:

11. ՏԱՊԱՆԱՔԱՐ, գավթի հյուսիսարևմտյան մասում, արտաքուստ, օրորոցաձև, հարավային կողին, 4 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԻՄ ԲՆԱԿԱՐԱՆԻ, ԶՄԷՍՐՈԲ ԱՆՎԱՆ

ՎԵՐԱ / ⌈Հ⌉ ԱՌՆԻ ՔԱՋ ԵՒ ՄԵԾ ՀԻՍՈՒՆԱՊԵՏԻ

ԵՒ ⌊Է⌋ ԻՆԵՐ ԿՐԿՆ ⌊ՈՂ ⌊Ջ⌋ Ժ (10) ԽՐԱՏ ԵՒ ⌊Է⌋ ԻՆԵՐ

Ի ԳԵՂՋԷՆ ՄԱԿԱՐԱՎԱՆՔԻՑ / ՎԱԽՃ ⌊ԱՆ⌋ ԵՑ ⌊ԱՒ⌋ ԹՎ ⌊ԻՆ⌋ ՌՃԿ(1711):

Ծանոթ. Կ.Ղաֆադարյանի գործունեության տարիներին գավթի և տապանատան կողքի այս հատվածը, որտեղ Մեսրոպ հիսունապետի տապանաքարն է, երևի եղել է հողածածկ, այլապես այն և նրա հարևանությամբ գանվող հաջորդ երկու տապանագրությունները դուրս չէին մնա նրա գրքից:

Արձանագրությունը թեև գեղագիր է, բայց գրիչը թույլ է տվել մի շարք վրիպակներ, նախ հստակ չի փորագրել ԻՄ ԲՆԱԿԱՐԱՆԻ բառերի առաջին փակագրի Բ տառը, ապա երկրորդ տողի վերջնամասում ԼԻՆԵՐ-ի փոխարեն դաջել է ՐԻՆԵՐ, իսկ նույնը երրորդ շարքում պատկերել ԼԻՆԵԻ ձևով:

Տապանաքարի գրվածքից այն է հասկացվում, որ քաջ և մեծ հիսունապետ Մեսրոպը եկել է Հովհաննավանք և խորացրել իր իմացությունները աստվածաբանության մեջ: Չի բացառվում, որ նա զինվորական համազգեստը փոխարինած լինի կրոնավորի սքեմով:

Հիսունապետ զինվորական կոչմանը սովորաբար հասնում էին մելիքական տոհմերի ներկայացուցիչները կամ էլ մարտական գործողություններում խիզախությամբ աչքի ընկած հասարակ ծագում ունեցող զինվորները:

Հստակ չէ՝ ծնունդով ո՞ր Մակարավանքից է Մեսրոպ հիսունապետը՝ Շիրակի՞, թե՞ Տավուշի:

12. ՄԱԼԱՏՍԱՊԱՆ, նույն տեղում, նախորդից մի փոքր հյուսիս, 7 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԴԻՐ / ՀԱՆԳՍՏԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ, / ԱՆՈՒԱՄԲ, ՈՐ ՄԱ ԿՈՉԻ ՈՒՆԵՑՈՂ / ՋԿԱՐԳՆ ՋԱՀՆԿԱԼԻ, / ՀԱՐՍ ՈՐԴԻ ՑԵՍԱՒԱՅՍ, / ՈՐ ԷՐ ՆԱ ԱՍՏԱՊԱՏՑԻ,/ԹՎԻՆ ՌՃՂԱ (1742)-ԻՆ:

Ծանոթ. Դպիրի գերեզման է. ջահընկալությունը հայոց նվիրապետական աստիճանակարգում հանդիսանում է դպրության չորս աստիճաններից մեկը:

Աստապատը գյուղաքաղաք էր Արաքսի ձախ ափին՝ Նախիջևանում: Միջնադարում նշանավոր էին Աստապատի Սբ Վարդան և Սբ Ստեփանոս Նախավկայի վանքերը, որոնք եղել են դպրության ու գրչության կենտրոններ:

13. ՏԱՊԱՆԱՔԱՐ. սալաձև, նախորդի կողքին, խիստ քայքայված, դժվարընթեռնելի հազիվ նշմարվող տառահետքերով, 7 տող.



Ի ԲՆԱԿԱՐԱՆ ՏԱՆՆ ԲՆ⌜Ա⌝ԿԻ /
Յ⌞Ո⌟Հ⌞Ա⌟ՆՆ⌞Է⌟Ս ՔԱՋ Վ⌞Ա⌟ՐԴԱՊԵՏՆ. /
Կ⌞ԱՌՈՒ⌟Ց⌞Ո⌟Ղ ԴԷՏԷՏՈՒՆՆ, ԱՌԱՋՆՈՐԴ /
ԱՅՍՄ ՈՒԽՏԻՍ ... / ՎԱՂՃ/ԱՆԻ ԹՎ⌞ԻՆ⌟
Ռ(1000) ԵՒ ՃԻԸ (128)(+551=1679) /
Ի ԺԴ(14) ՆՈԷՄԲԵՐԻՆ ԵՒ ԾՆ / ԵԱԼ ...ԱՄ⌝ԻՆ:

Ծանոթ. Աշխատասեր Հովհաննես վարդապետ Կարբեցու շիրիմն է: Ըստ Արմեն Աստրյանի պրպտումների՝ նա Հովհաննավանքի առաջնորդ է դարձել 1651թ.՝ փոխարինելով իր ուսուցիչ Զաքարիա Վաղարշապատցուն, եղել է եռանդուն գործիչ, կատարել վերանորոգչական ու շինարարական աշխատանքներ, ընդօրինակել և պատվիրել ձեռագրեր[4]: Ի դեպ, Զաքարիա սարկավագն իր պատմությունը գրել է նաև Հովհաննեսի պահանջով ու միջնորդությամբ[5]: «Հետագայում Հովհաննեսը ձեռնամուխ է եղել Հովհաննավանքի գավթի հյուսիսում մեկ ուրիշ փոքր գավիթ կառուցելու, սակայն այն դեռ չավարտած՝ 1679 թ. նոյեմբերի 14-ին, մահացել ու թաղվել է իր իսկ անավարտ շինությունում»[6], որին նա, ըստ նոր ընդօրինակված արձանագրության, դիտատուն է կոչել: Այն, ըստ Արծրուն Սահակյանի բանավոր տեսակետի, որին մենք լիովին համամիտ ենք, նշանակում է առաջնորդարան, եպիսկոպոսարան:

[4] *Աստրյան Ա., Կարբի, Եր., 2010, էջ 75-76:*
[5] *Նույն տեղում, էջ 76:*
[6] *Նույն տեղում:*

14. ԽԱՉՔԱՐ. ագուցված բակի պատի մեջ, ներքնամասում, 1 տող.



ԱՇ⌊ՏԱՐԱ⌋Կ⌊ՑԻ⌋ ՏԷՐ ՊԱՂԻ
ՅԻՇ⌊ԵՑԷՔ⌋:

Ծանոթ. Խաչքարի ոճը բնորոշ է XIII-XIV դդ.:

15. ԽԱՉՔԱՐ. որմնափակ, գերեզմանոցի հարավարևելյան եզրին, դիմահայաց աջ կողին՝ եղծված 7 և պատվանդանի քիվին՝ 2 տող.



ԱՅՍ ՀԱ/Ն ⌈Գ Ի⌉ ⌈Մ Տ⌉Է/ԵՐԵՄԻ/Ա
ԵԻ ՈՀ/ԱՆԷՍ/Ի Ք ⌈Ա Հ⌉Ա/ՆԱՑԻՑ/....
⌈Երև..., Տ̅Ր̅ Ա̅Ծ̅⌉/
ՈՂՈՐՄԵՍՑԻ ՍՈՑԵԱ:

Ծանոթ. Հովհաննավանքի միաբանների մեջ Երեմիա անունով հայտնի է եղել Երեմիա Մարմաշենցին: Նա հանդիսացել է 1029 թ. ստեղծված Մարմաշենի վանական ուխտի վանահայրը, որն իրեն փոխանորդ է կարգել իր սիրելի աշակերտ Սոսթենեսին, հեռացել Հովհաննավանք ճգնության, որտեղ էլ վախճանվել է: Այդ մասին Երեմիան հայտնել է մի խաչքարի արձանագրությամբ, որն այժմ չկա: Բարեբախտաբար, այն հրատարակել է Զաքարիա Սարկավագը, որից էլ օգտվել են մյուս բոլոր հրատարակիչները[7]:

16. ՏԱՊԱՆԱՔԱՐ, վանքի հյուսիսային մասում գտնվող գերեզմանոցի կենտրոնում, գորշավուն, հարավային լանջին, 3 տող.



ԱՅՍ Է ԴԻՐ ՔԱՀԱՆԱՅ Ա̅Յ̅ ԽԱՉԳԻՒՏԻՆ, ՈՐ ՀԱ⌈Ս⌉/ԱԿ ՏԻԱՒՔ ՓՈԽԵՑԱՒ Ի Ք̅Ս̅: ԱՐԴ ԱՂԱՉԷ ՅԻՇԷ⌈Լ⌉ / Ի Ք̅Ս̅:

Ծանոթ. Տապանաքարը XVII-XVIII դդ. է: ՏԻԱՒՔ-ը գործիական հոլովն է «տիք» բառի, որ նշանակում է «տարիք», «հասակ»:[8] Հետևապես, ՀԱՍԱԿ ՏԻԱՒՔ պետք է հասկանալ «տարիքն առած հասակով»:

---

[7] Տե՛ս *Զաքարիա Սարկաւագ Քանաքեռցի, Պատմագրութիւն, հ. Գ, Վաղարշապատ, 1870, էջ 10-11: Ղաֆադարյան Կ., Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 116:*

[8] *Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, Եր., 1981, էջ 871:*

17. ԽԱՉՔԱՐ, կոտրված, ներքնամաս, Հովհաննավանքի դիմաց, ձորի մյուս կողմում, կոթողի մոտ, 4 տող.



Ի⌉ ԹՎ⌊ԻՆ⌋ ՉՁԲ(1333) /
ԲԱՐԵԽԱՒՍ Է ՍԲ
ՆՇԱՆՍ Ի⌈ԽԱՆԵԻՆ / ՈՐՔ⌉
ԷՐԿՐՊԱԳԷՔ
Զ ⌈ՄԽԻ⌉ Թ/ԱՐ ՑԻՇԵՑԷՔ Ի ՔՍ:

Ծանոթ. ՀՀ Արագածոտնի մարզի Հովհաննավանքի առաջին գյուղապետ (1996-2001թթ.) Ամասիկ Միսակյանի ասելով՝ այդ արձանագիր քարն ապահովության նպատակով ինքն է բերել 1987 կամ 1988թ. Սերկևիլ բնակատեղիից:

## НОВЫЕ ЛАПИДАРНЫЕ НАДПИСИ ИЗ ОВАННАВАНКА


___ *Резюме* ___ ___ *А. Манучарян* ___

**Известный духовный центр средневековой Армении Ованнаванк, чьё епархиальное правомочие в начале XIVв. распространялось кроме провинций Нига, Амберда и Арагацотна также на Ширак, богат лапидарным наследием.**

**Лапидарные надписи монастыря, общей численностью 80, на высоком научном уровне копировал и опубликовал археолог Каро Кафадарян (“Ованнаванк и её надписи”, Ереван, 1948). Эти надписи являются важнейшими первоисточниками изучения не только истории монастыря Ованнаванк, но и армянского народа. В Ованиаванке нами были расшифрованы более 1,5 десятка надписей, часть которых во время деятельности К. Кафадаряна было покрыта слоями штукатурки и грунта, часть из них была слегка видима, а некоторые с помятыми записями были приведены из других мест.**

**Самая древняя надпись - это памятная запись на маленьком хачкаре (крестокамне), расположенном в притворе Ованнаванка. Она датируется 1033 г. и является самой древней надписью монастыря.**

**В новонайденных лапидарных надписях упоминаются известные князья, княгини, высокопоставленные военные и духовные деятели, главы епархии. Эти новонайденные надписи ещё более обогащают огромное наследие Ованнаванка.**



***Տեղեկություններ հեղինակի մասին***
*Մանուչարյան Աշոտ Գագիկի – պ.գ.թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատող,*
*Email: ashot.manucharyan.1959@mail.ru*